



Լոռու մարզի Արդվի գյուղի տարածքում գտվող Շեկաղբյուրի ոսկի-բազմամետաղային հանքերևակման տարածքում 2017-2020թթ. նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: «Միռամ» ՍՊԸ-ն բնապահպանության նախարարություն է ներկայացրել

երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Գյուղացիները դեմ են հանքի շահագործմանը: Այսօր 26.07.2017թ-ին Արդվիի համայնքապետարանում նախատեսված էին հանրային լսումներ, սակայն գյուղացիները որոշեցին փակել գյուղի ճանապարհը հանքի համար երկրաբանական ուսումնասիրություններ կատարող «Միռամ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին առաջ: Մեկ բռունցք դարձած մանուկ ու ծեր կիզող արևի տակ մոտ 2 ժամ իրենց բողոքն արտահայտող տարբեր խորագրերով պաստառներ ձեռքներին փակեցին գյուղի ժանապարհը: Գյուղապետը գյուղացիների կողքին չէր, մեկնաբանելով որ ինքը արձակուրդ է, մեկնել էր Երևան, փոխարենը գյուղացիների սատար կանգնելու էին եկել գյուղի ճակատագրով անհանգստացած լրագրողներ, բնապահպաններ, «ԵԼՔ» խմբակցության ներկայացուցիչներ և ՀԿ-ի ներկայացուցիչներ: Գյուղացիները ասում են, որ գյուղը 566 հա արոտավայր ունի, որից 140-ն ուզում են ոսկու ուսումնասիրության համար վերցնել, և իրենց բան չի մնա: Հանրային լսման ժամանած բնապահպանության նախարարության ներկայացուցիչները մեքենայից դուրս չեն գալիս՝ լսելու ճանապարհը փակած գյուղացիների բողոքները: Նրանք ասում են, որ պատրաստ են քննարկել բոլոր խնդիրները՝ հանրային քննարկման համար նախատեսված վայրում, այն է՝ գյուղապետարանը: Գյուղացիները միաձայն ասում էին, որ իրենք դեմ են հանքի շահագործմանը, և չեն ուզում ոչ մի հանրային լսում տեղի ունենա. թող հեռու մնան մեր գյուղից - ասաց գյուղացիներից մեկը: Հանրային լսման եկած նրկայացուցիչները այդպես էլ չմոտեցան. հեռացան և հանրային լսումը տապալվեց: «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն » ՀԿ-ն աջակցելու է Արդվի համայնքի բնակիչների կամարտայատմանը և սատար է կանգնելու նրանց քաղաքացիական իրավունքներին:



